

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությանը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻՍ
ՀԱՅԿԱԶՆԵԱՅ» ԵՐԿԸ**

Բանալի բառեր՝ Հայոց տոմար, մեկնություն, Անանիա Շիրակացի, Հովհաննես Կոզեռն, Հովհաննես Սարկավագ, տեսական բնույթ, գործնական-կիրառական բնույթ:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» ժողովածուի այն բնագրերը, որոնցում առկա հարցերը, կանոններն ու սահմանումները համեմատության եզրեր ունեն Անանիա Շիրակացու և Հովհաննես Կոզեռն Տարոնեցու մեկնությունների հետ: Ներկայացրել եմ Հովհաննես Սարկավագի կարգած կանոնական սահմանումները և անհրաժեշտության դեպքում դրանք բաղդատել նախորդ շրջանի տոմարագետների սահմանած նույնաբնույթ կանոնների հետ՝ ցույց տալով առանձնահատկություններն ու նմանությունները, պարզել կանոնների փոփոխության պատճառները: Առավել մանրամասն համեմատությամբ առաջարկված են նաև այն սահմանումները, որոնց չեմ անդրադարձել նախորդ հոդվածներում¹ (օրինակ՝ «Յաղագս Լուսնին»): Այստեղ ընդգծված է նաև մեկնությունների և առանձնապես խնդրո առարկա մեկնության միանշանակ կերպով շատ արժեքավոր սկզբնաղբյուր լինելու հանգամանքը՝ տոմարական դժվարընկալելի հարցերը դյուրին դարձնելու և պարզաբանելու համար:

Հայոց տոմարի պատմության մեջ առանձնահատուկ արժեք ունեն տոմարի մեկնողական աղբյուրները: Տոմարին վերաբերող հարցերն այնքան էլ դյուրին չեն. գուցե այդ իսկ պատճառով մեզանում առկա են բազում մեկնություններ:

* ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի ասպիրանտ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի և «Հայ ասպետ» դպրոցի ուսուցիչ: ggalstyan123@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ մարտի 10, 2022, գրախոսելու օրը՝ մարտի 26, 2022:

¹ **Գ. Գալստյան**, «Անանիա Շիրակացին և նրա «Մեկնություն տոմարի Անդրեասայ» բնագիրը», «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, Երևան, 2020, № 4, էջ 62-71, **նույնի՝** «Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնություն տոմարի» աշխատությունը», *ՇՊՀ Գիտական տեղեկագիր*, 2020, № 1, Պրակ Բ., էջ 77-94, **նույնի՝** «Սամուել Անեցին և նրա «Մեկնություն տոմարի» աշխատության մի ֆանի հարցեր», «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2020, էջ 43-50:

Տոմարի և տոմարական մեկնությունների ուսումնասիրությունը հնում պահանջել է բազմակողմանի գիտելիքներ: Հայոց տոմարի շարժականությունը ևս դժվարություններ է առաջացրել՝ խրթին հարցերին պատասխան տալու համար: Այսու, կիրառական աստվածաբանության խնդիրները լուծելու նպատակով ստեղծվել են հայոց և այլ տոմարների մեկնություններ, որոնք ժամանակի ընթացքում բազմիցս ընդօրինակվել են: Թերևս այդ ամենի նպատակը ոչ միայն արդեն եղած մեկնությունը խմբագրելն էր, այլև այդ մեծարժեք աշխատությունները սերունդներին փոխանցելը: Հետաքրքրական է մի փաստ. թեև Հովհաննես Սարկավազն անշարժացրեց հայոց տոմարը², սակայն շարունակեցին գրվել հայոց տոմարի մեկնություններ:

Հովհաննես Սարկավազից առաջ հայոց տոմարի մեկնություններ հեղինակել են Անանիա Շիրակացին և Հովհաննես Կոզեռնը, որոնց գրվածքներին անդրադարձել ենք նախկինում³:

Հովհաննես Սարկավազ Իմաստասերը միջնադարյան մատենագրության կարկառուն ներկայացուցիչներից է: Նա ծնվել է մոտավորապես 1057 թ. Փառիսոսում, եղել կուսակրոն քահանա և վարել անապատական կյանք⁴: Զբաղվել է գիտական, գեղարվեստական, մանկավարժական լայնածավալ գործունեությամբ, թողել է մատենագրական մեծ ժառանգություն (պատմագիտական, մաթեմատիկական, տիեզերագիտական, տոմարագիտական, բանաստեղծական, փիլիսոփայական⁵): Վախճանվել է 1130 թ. փետրվարի 11-ին⁶:

Հայ մատենագրական ժառանգության մեջ Հովհաննես Սարկավազը նախ և առաջ հայտնի է հայոց շարժական տոմարն անշարժի վերածելու հանգամանքով⁷: Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն» աշխատության մեջ 1085 թվականի տակ կարդում ենք. «Սկիզբն նոր թուականին, որ կարգեցաւ ի Յովհաննէս վարդապետէ Հաղբատացոյ, որ Սարկաւազ կոչեցաւ»⁸: Այսպիսով Սարկավազադիր անշարժ տոմարը թվականության համակարգ է, որի բաղադրիչները (ամիսներ, շաբաթագրեր, տարեսկիզբ, տանուտեր, հիմնականում անշարժ տոներ՝ տարվա կտրվածքով) տեղ են գտել 1094 թվականին ստեղծված իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուի երկու մասում՝ «Ազգաց կանոն»-

² Այդ մասին մանրամասն տե՛ս ստորև:

³ Գ. Գալստյան, «Անանիա Շիրակացին և նրա «Մեկնութիւն տումարի Անդրեասայ» բնագիրը» և «Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնութիւն տումարի» աշխատությունը»:

⁴ Գ. Մխնճյան, Հովհաննես Սարկավազը և իր «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ»-ն, Ատենախոսություն, Երևան, 2013, էջ 16, անտիպ, (այսուհետ՝ Գ. Մխնճյան, Ատենախոսություն):

⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 34-115:

⁶ Գ. Մխնճյան, Ատենախոսություն, էջ 162:

⁷ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 65:

⁸ Մխիթար Այրիվանեցի, Մխիթար Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860, էջ 60:

ներում ու «ՇԼԲ-ամյա զատկացուցակ»-ներում⁹, որի հայոց տոմարով շարքը վերականգնել է Գ. Սիմոնյանը¹⁰: Սարկավազը հայոց տոմարն անշարժացրել է հիմնվելով աստվածաշնչային ու բնագրային տեղեկությունների վրա՝ մարտի 20-ը զուգադրելով արեգ 12-ին և նահանջ տարվա 1 օրը հավելելով մեհեկան ամսին (31 օր), որից ածանցվել է փետրվարի 29 = մեհեկան 23-ին՝ նահանջ տարում: Նրա կարգած տոմարի տարեմուտը եկեղեցական տարեսկիզբն է՝ հունվարի 6 = քաղոց 29-ին, որի սահմաններում է նաև հունվարի 1 = քաղոց 24-ին: Իսկ նրա «Ազգաց կանոնների» ուսումնասիրությունը հանգեցնում է այն հետևություն, որ նրա համար բնական, իրական տարեսկիզբը կապված է գարուն եղանակի և Խոյ կենդանակերպի հետ¹¹: Թեև Հովհաննես Սարկավազը սկսել է Սարկավագադիր 1 թվականով (= 1085 թ.), այսինքն՝ նախորդ ՇԼԲ-ի առաջին տարին (ապրիլի 13-ի լրման տարի), այնուամենայնիվ, հաշվումների համար հիմք է ընդունել Սարկավագադիր 10 թվականը, այն է՝ նախորդ ՇԼԲ-ի 10 թվականը (ապրիլի 4-ի լրման տարի):

«Մեկնութիւն տոմարի» բնագրերի շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Հովհաննես Սարկավազի մեկնությունը: Հատկանշական է, որ տարբեր ուսումնասիրողներ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն ներկայացրել են իբրև Հովհաննես Սարկավազի տոմարական աշխատությունների շարք¹² (Փ. Անթապյան¹³, Ա. Աբրահամյան¹⁴), սակայն, ըստ Գ. Սիմոնյանի՝ նա ստեղծել է տոմարի ամբողջական ժողովածու, որը կոչվում է «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»: Նրա տոմարական ժառանգությունը վերաբերում է տոմարի թե՛ տեսական, թե՛ գործնական խնդիրներին. այն մեզ է հասել ցաքուցրիվ վիճակով, բազմաթիվ ընդօրինակություններով ու խմբագրություններով: Ուսումնասիրությունները փաստում են, որ մեզ հասած առանձին-առանձին բնագրերը ոչ թե անշատ գրված աշխատություններ են, այլ Սարկավազի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի մասեր կամ գլուխներ¹⁵: Այս մասին ամբողջական պատկերացում կազմելու համար ուշագրավ է է. Շիրինյանի հաղորդումը: Հեղինակը, խոսելով Անանիա Շիրակացու կազմած «Քննիկոն» ժողովածուի մասին, մեջբերում է «**ի մի արփի**» արտահայտությունը, որն առկա է

9 Գ. Սիմոնյան, «Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից», *Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք* է., Երևան, 2012, էջ 217:

10 Գ. Սիմոնյան, «Հովհաննես Սարկավազի ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակները», *Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք* 2., Երևան, 2011, էջ 58-85:

11 Գ. Սիմոնյան, «Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից», էջ 233:

12 Գ. Սիմոնյան, *Ատենախոսություն*, էջ 67:

13 Փ. Անթապյան, *Հովհաննես Սարկավազ Իմաստասեր*, Երևան, 2001, էջ 19-20:

14 Ա. Աբրահամյան, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 65-67:

15 Գ. Սիմոնյան, *Ատենախոսություն*, էջ 66:

միջնադարյան ձեռագրերում և որը, ըստ հետազոտողի, հաճախ օգտագործվել է՝ բնորոշելու համար տարբեր գրվածքների (երկերի) դասավորվածության կարգը կամ միատեղ լինելը¹⁶: Օրինակ՝ «Յօժարեցեալ ի գործ գրչի, զԱստուածաշունչս ի մի տրփի, եւ նուրբ գրեանս, որ ի կարգի»¹⁷: Բերվածից կարելի է եզրակացնել, որ միջնադարյան մատենագրության մեջ ընդունված էր նույն հեղինակի մի շարք նույնաբնույթ երկերը ներառել մեկ ամբողջական ժողովածուի մեջ, քանի որ դրանք միմյանց շարունակությունն էին կազմում: Այդ ձևով դրանք դառնում են գործնական ու կիրառելի, քանի որ մեկը պայմանավորված է լինում մյուսով կամ հիմնված է մյուսի հաշվումների վերջնարդյունքների վրա: Ուստի, միանգամայն տրամաբանական և ընդունելի է Հովհաննես Սարկավագի՝ ամբողջական տոմարական ժողովածու ստեղծելու և միմյանց շարունակությունը ենթադրող բնագրերի դրանում ներառելու հարցը:

Նշյալ տոմարական ժողովածուն ունի հետևյալ ենթավերնագրերը՝ «Յաղագս Ծ. (500) եկի», «Վասն տանից տարեկանաց շրջաբերութեան» անվանված («Պահանջեցեր յինեն ուսումնասէր» սկսվածով), «Վասն հայկազնեան տումարիս նորին Հովհաննոս» («Ասացաք յառաջագոյն...»), «Ըստ եբրայեցոց հնագիտաց եւ մարգարէից ոմանց...» սկսվածով, «Նորին Յովհաննոս յաղագս իննետասներեկ ամացն» («Ի տգիտաց ոմանց...» սկսվածով), «Պատնառ խանգարման Զատկին», «Պատմութիւն սրբոյ Զատկին», «Յաղագս եղանակաց...» («Վասն երկուցն եւ չորիցն ապրելիոյ ամսոյ անմիաբանութիւն...» սկսվածով), «Յաղագս յարակայից» («Կարծեաւ...» սկսվածով) եւ «Պատնէն տումարի Հայոց Մեծաց», «Պատնէն տումարի ըստ հայոց եղանակաց», «Պատնէն տումարի Սարկավագի», «Պատնէն տումարի հռոմեացոց», «[Պատնէն տումարի հունաց]», «Պատնէն տումարի ասորոց», «Պատնէն տումարի եբրայեցոց», «[Պատնէն տումարի արաբացոց]», «[Պատնէն տումարի մակեդոնացոց]», «Պատնէն տումարի է (7) ազգաց [Եգիպտացոց, Եթէպացոց, Աթենացոց, Բիթանացոց, Կապադովկացոց, Վրաց եւ Ադուանից]», «[Պատնէն տումարի Պարսից եւ Տանկաց]», «Լուսնացոյց», «Թուական ազգաց եւ ժամանակագրութիւն», «Ազգաց ազնվականոններ» («Խառնախորան»), «Ազնուականոն ԾԼԲ(532)-ամաց (հուլեան եւ հայոց անշարժ)»¹⁸: Այդ ենթավերնագրերն ու սկսվածքները մեզ օգնում են՝ պատկերացում կազմելու մեկնության ամբողջական էություն մասին: Գ. Սիմոնյանը Սարկավագի աշխատության այն հատվածները, որոնք վերաբերում

¹⁶ E. M. Shirinian, "The Study of Sciences at the Time of Anania Širakac'i," in: Sciences and Learning in Armenia between Anania Širakac'i and Grigor Magistros, *Orientalia Christiana Periodica*, Roma, Nr. 1, Vol. 86 (2020), p. 101.

¹⁷ Նույն տեղում, տե՛ս նաև՝ ՄՄ 1500, 976 ա:

¹⁸ Գ. Սիմոնյան, *Ատենախոսություն*, էջ 73:

են տումարի մեկնության հարցերին, դիտում է որպես տեսական ժանր, իսկ «Պատճէնները», «Ազգաց ազնվականոնները» («Խառնախորան»), «Հուանացոյցը», «Շէթ-ամյա աղյուսակները (հուլեան եւ հայոց անշաժ)»..., իր կարծիքով, միտված են լուծելու գործնական-կիրառական խնդիրներ: Կարծում եմ, որ կարևոր է շեշտել նաև մեկնությունների և տեսական, և գործնական-կիրառական բնույթը: «Պատճէն»-ները ևս ենթարկվել են խմբագրման և մեկնության: Այսինքն՝ հեղինակները, գրելով տումարի մեկնությունները, մեկնել և խմբագրել են «Պատճէն»-ները՝ առավել հասկանալի և ճշգրիտ դարձնելու համար որոշ կիրառական խնդիրներ, օրինակ՝ տոների ճշգրիտ ամսաթվերը որոշելը (կիրառական բնույթ):

Սույն հոդվածի համար ընտրել ենք Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուի մի քանի բնագրեր: Ստորև ներկայացնում ենք դրանց համառոտ բնութագիրը:

1. Առաջին բնագիրը՝ «Յովհաննու արարեալ մեկնութիւն, որ մականուն Սարկավազ կոչի», Ա. Աբրահամյանի հրատարակության մեջ¹⁹ կրում է ամբողջ ժողովածուի վերնագիրը, այն է՝ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»՝ «Պահանջեցեր յինէն ուսումնասէր վասն հայկազնեան տումարիս տաւնից տարեկանաց շրջաբերութեան» սկսվածքով: Ա. Աբրահամյանը բնագիրը հրատարակել է ՄՄ 1973 ձեռագրի հիման վրա՝ ՄՄ 2017 ձեռագրի հետ համեմատությամբ²⁰:

Սարկավազն այս բնագրի սկզբում մեկնում է հայոց ամիսների անշարժության և տոների շարժականության հարցը, որը բնորոշ էր հայոց տումարին. «Զի որպէս այլոց ազգաց ամիսք փոխին, հայոց հասարակածն փոխի եւ հայ ամիսք անշարժք եւ անխաղաքք են»²¹:

Այս գրվածքում նա անդրադարձել է նաև եբրայական տոների մեկնությանը, քանզի դրանց հիման վրա են ձևավորվել հայոց քրիստոնեական տոները: Սարկավազը, հետևելով Անանիա Շիրակացուն, ճիշտ է համարում տումարական արվեստի հիմքում եբրայական համակարգը դնելը: Տոմարական արվեստի ստեղծման հարցի առիթով նա հիշատակում է Մովսես մարգարեին. «Բայց վասն արուեստիդ տումարի յառաջագոյն նախ Մովսէս գրեաց եբրայեցոցն հրամանաւ Աստուծոյ՝ ի չորեքտասաներորդ ատուր ամսոյն նիսան տաւնել յեգիպտոս գտան ելիցն ի գարնանային հասարակատրութեանն, յորժամ տին սկսանի յաղթահարել զգիշերն: Եւ որպէս ծաղկունմ սկսանին երեւել, նոյնպէս եւ աստուածգիտութիւն բուսանել սկսաւ»²²: Սակայն, ելնելով նույն

¹⁹ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 222-236:

²⁰ Նույն տեղում, էջ 236:

²¹ Նույն տեղում, էջ 222:

²² Նույն տեղում, էջ 224:

այս բնագրի տեղեկությունից՝ ստացվում է, որ հայկական տոմարն առավել հին է եբրայականին. «Այլ յառաջ քան զՄովսէս ո՛չ ուրէ՛ք էր գիտութիւն արուեստիս, բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսէս, քանզի ասեմ թէ ի ձեռն հոգւոյն, որ ազդէր ի նահանջապետսն, Հայկն, առաջին նահապետն Հայոց, զամիսքդ կարգեաց եւ զանուանս ուստերաց եւ դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց: Յետոյ բազումք ի վարդապետաց իւրաքանչիւր ազգաց եղին տաւնս»²³: Մեջբերված հատվածներից հետևում է, որ Հայոց նահապետ Հայկի՝ իր դուստրերի և ուստրերի անուններով հայոց տոմարի ամսանունները և որոշ օրանուններ կոչելը ապացույցներից մեկն է դառնում այն բանի, որ Հայոց տոմարն ամենահինն է՝ որպես յուրատեսակ համարողական արվեստ: Ուշագրավ է, որ նույն միտքը հայտնում են նաև Անանիա Շիրակացին, Հովհաննես Կոզեռնը, ԺԲ. դարի տոմարագետ Սամուել Անեցին՝ նշելով հստակ, թե Հայկ նահապետի որդու կամ դստեր անունով որ ամիսն է կոչվել: Այսպես. «Նոյնպէս եւ անուանք որոց իւրոց եւ դստերաց նորա եղին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հօրն: Եւ են այսոքիկ. Նաւասարդ եւ Հոռ եւ Սահմ եւ Մեհեկ եւ Արեգ եւ Մարե՝ դստերք էին Հայկին, իսկ Տրէ, եւ Քաղոց եւ Արաց եւ Հրոտից՝ որդիք էին Հայկին: Իսկ Մարգաց եւ Հարուանց, զոր այժմ կոչեն Ահկի, զայսոսիկ ի գործոյ առին զանուանս, վասն այսր կոչի Աբերական տումար »²⁴:

Բնագրում պարզաբանված է նաև հայոց շարժական և մնացյալ ազգերի անշարժ տոմարների տարբերությունը, որտեղ Սարկավագը Հայոց տոմարի պարբերականությունը կապում է ոչ թե սովորական նահանջների, այլ գերադրական նահանջի, այն է՝ 1460-ամյա պարբերաշրջանի հետ՝ «...Այլ տաւնից տեսութիւն յարափոփոխ անցելով նահանջիմ եւ հասարակատրութեանն գնալով, ընդ բոլոր ատուս տարւոյն ի հարկէ ընդ իւր շարաբերելով գորութիւն տաւնից իսողացմամբ, ի բոլոր ամին կատարէ ՌՆԿ (1460) եւ ոչ ամիսն շարժի որպէս զայլազգացդ»²⁵:

Մեկնության մեջ ներկայացված են թվականության տարբեր համակարգեր²⁶: Բնագրում մեկնված է նաև, թե ինչ է էսսյան 532-ամյա պարբերաշրջանը և թե որն է դրա կատարելությունը: Սարկավագը ներկայացնում է էսսյան պարբերաշրջան ստեղծելու կարևորության հարցը, որ Անդրեասի 200-ամյա Զատկացուցակն արդեն ավարտվել էր, և հարկ էր ստեղծել այնպիսի Զատկացուցակ,

²³ Նույն տեղում:

²⁴ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Երևան, 1940, էջ 76-77, հմմտ. Յովհաննէս Տարանեցի Կոզեռն, Մեկնութիւն տոմարի զոր արարեալ Յոհանիսի վարդապետի որ մականուն Կոզեռն. Վասն հոռոմին, (ՄՀ, հ. ԺԶ., ԺԱ. դար), Երևան, 2012, էջ 69, հմմտ. ՄՄ 5809, 79 ք-80ա, ՄՄ 8716, 24ա-24բ, Ա. Աբրահամյան, «Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը», էջմիածին, 1952/Ա., էջ 36:

²⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, էջ 222:

²⁶ Նույն տեղում, էջ 228:

որն ավարտից հետո նույնությամբ կարող էր կրկնվել: Այդ պատճառով է, որ «... ժողովեալ յԱղեփասանդրիայ ԼԶ (36) փիլիսոփայի կարգեցին զհինգհարիւրեակ բոլորդ, որ ընկալեալ եղև յեկեղեցոյ աստուծոյ... Եւ բոլոր ասի, զի սպառուած ոչ ունի՝ ո՛չ սկիզբն, ո՛չ վախճան, զարէն անոյ՝ անեզր բոլորեալ»²⁷:

2. Հաջորդ բնագիրը՝ «Յաղագս ըստ հռոմոց ամսոց, եւ ԴՓ. երորդ լուսնոյ զատկաց, եւ փոփոխմանց իրաց, եւ անուանց եւ յարակայից» աշխատությունն է՝ «Ձթուականէն անունեցելոյ՝ թէպէտ եւ ոմանք ըստ կարծեաց...» սկսվածքով, որն առկա է ՄՄ 1973 (թթ. 255բ-260ա), ՄՄ 2001 (թթ. 167ա-178ա), ՄՄ 1971 (թթ. 64 բ-72բ), ՄՄ 2180 (թթ. 436ա-441ա) և ՄՄ 2762 (թթ. 10ա-15բ) ձեռագրերում, որոնցից Ա. Աբրահամյանը լավագույնն է համարել ՄՄ 2001 ձեռագրի բնագիրը և նրա հիման վրա կազմել և հրատարակել քննարկվող տեքստը²⁸:

Բնագրում արժարժված է հարակայի²⁹ խնդիրը: Վերջինս ժամանակի ընթացքում կրել է փոփոխություն (ԽԴ (44) > ԽԶ (46))³⁰: Եվ հենց այս փոփոխությունն է փաստում, որ բնագրի հեղինակը Հովհաննես Սարկավազն է³¹: Այստեղ խոսվում է նաև վերագիրների³² փոփոխության մասին,³³ որոնք կներկայացվեն ստորև:

3. Հաջորդ կանոնական բնագիրն է «Յոհաննու ֆահանայի յաղագս եղանակաց եւ տաւնից եւ ֆանիանութեան ամաց դիպարանութեամբ ի նոյն տեսութիւն»՝ «Չնախնեաց կարծիս եւ ասացուածս ի ձեռն քննութեան...» սկսվածքով: Այն հասել է երեք խմբագրություն՝ ՄՄ 2001, ՄՄ 1973 և ՄՄ 1971 ձեռագրերում: Հրատարակությունը կատարված է ՄՄ 1973 ձեռագրի հիման վրա³⁴:

Բնագրում քննարկվում է Ծ-եակի 19-ամյակի զատկական լրման առաջին տարին ապրիլի երկուսի՞ն, թե՞ ապրիլի չորսին կանոնելու, սահմանելու հարցը (տե՛ս ստորև):

²⁷ Նույն տեղում, էջ 224:

²⁸ Նույն տեղում, էջ 251:

²⁹ Հարական՝ «յարակայ», երկու տարբեր օրացույցների համապատասխան ամիսների ամսաթվերի միջև եղած տարբերությունն է, այսինքն՝ մեկը մյուսի նկատմամբ ունեցած շեղումը: Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Բրուսյան, *Հայկական տոմարագիտություն*, Երևան, 2016, էջ 118-123, տե՛ս նաև Հ. Բաղդասյան, *Օրացույցի պատմություն*, Երևան, 1970, էջ 142:

³⁰ Ա. Աբրահամյան, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 249:

³¹ Գ. Միսնյան, *Ատենախոսություն*, էջ 84:

³² Վերադիր (էպակոս) է կոչվում արեգակնային և լուսնային տարիների օրերի թվի տարբերությունը: Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Բրուսյան, *Հայկական տոմարագիտություն*, էջ 90-95, նաև Հ. Բաղդասյան, *Օրացույցի պատմություն*, 296-308:

³³ Ա. Աբրահամյան, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 249-250:

³⁴ Նույն տեղում, էջ 255:

4. «Մեկնութիւն տոմարիս Հայկազնեայ» աշխատութեան տեսական մասի մեր քննած վերջին բնագիրը «Յաղագս յարակայի, վերադրաց եւ ռուպէից» աշխատութիւնն է, որ օրգանական շարունակութիւնն է վերոնշյալ «Յոհաննու քահանայի յաղագաս եղանակաց եւ տանից եւ քանիանութեան ամաց դիպաբանութեամբ ի նոյն տեսութիւն» հատվածի: Ա. Աբրահամյանին այն հայտնի է եղել ՄՄ 1973 (թթ. 24ա-27բ), ՄՄ 1971 (թթ. 79ա-85ա), ՄՄ 2180 (թթ. 444բ-448բ) և ՄՄ 2762 (թթ. 19ա-23ա) ձեռագրերից: Նա հրատարակել է բնագիրը՝ ըստ ՄՄ1973 ձեռագրի, իսկ «Յաղագս ռուպէից» գլուխը՝ ըստ ՄՄ 1971 ձեռագրի, քանի որ ՄՄ 1973 գրչագրում այն բացակայում էր:

«Յաղագս յարակայի» բաժնում Հռոմեական տոմարի օրինակով Սարկավագը ցույց է տալիս, որ հարակայի արժեքը պետք է լինի *հՁ (46)* և որ բոլոր ամսամասթվերով այն ստանում է միևնույն՝ *հՁ (46)* հաստատունը³⁵: Հովհաննես Իմաստասերը ներկայացնում է վերադիրների համակարգի օրինաչափութիւնները՝ ցույց տալով դրանց միջև եղած տարբերութիւնը, այն է՝ *ԺԱ (11)* «զմետասան թիւնն յաւելումբ ի վերադիրն»: Նաև օրինակներով ցույց է տալիս, թե ինչպէս է կարելի վերադիրների օգնութեամբ ստանալ Զատկական լուսնի լրման ամսամթվերը. «Ապրիլի չորս, դիր զայդ ի վերայ Մարտի ամսոյ եւ լինի *ԼԵ (35)*, երթ մետասան (11), մնայ *ԻԳ (24)*, լրումն Լուսնի առաջիկա ամին»: Եվ ինչպէս արդեն նշվեց, 19-ամյակի 19-րդ տարում վերադիրը դառնում է 12, որը ցույց է տրվում հռոմեական տոմարի մարտի 25-ի լրման տարվա օրինակով³⁶:

Հովհաննես Սարկավագի «Պատճէն»-ում ևս պահպանված է վերագրի հետևյալ սահմանումը. «Վերադիր այսպէ՛ս արա. կա՛լ զքուականն եւ տես, թէ քանի նահանջ կա ի նմա կամ քանի իննետասներեակ, այս բազմապատիկ արա զԱ (1) ԺԱ (11) ըստ նահանջիցն պակասեցո, ըստ իննետասներեկացն յաւել, Ը (8) թիւ հանապազ ե՛րթ եւ զայլն Լ (30) Լ (30), որ մնա՛ վերադիր է»: «Եւ եթե Փոքր թուականան կամիսցիս առնել, զհանապազորդն ե՛րթ ԻԱ (21)»³⁷: Հետաքրքրական է, որ Սարկավագից վերցված վերագրի կանոնն է պահպանվել նաև Հովհաննես գրչի ընդօրինակութեան մէջ³⁸:

Այս բնագրում Սարկավագն անդրադառնում է նաև հարականների հարցին, բայց ոչ թե մեկնելով հարական կամ դրա տեսակները, այլ ներկայացնելով իր կատարած փոփոխութիւնը հարականների հաշվարկման համակարգում: Հռոմեական տոմարի օրինակով նա ցույց է տալիս, որ հարական պետք է լինի *հՁ (46)*, նաև մատնանշում, որ նրանք, ովքեր հարական կանոնել են *հԳ (44)*,

³⁵ Նույն տեղում, էջ 256-257:

³⁶ Նույն տեղում, էջ 258:

³⁷ Նույն տեղում, էջ 205:

³⁸ Նույն տեղում, էջ 217, հմմտ. Գ. Սիմոնյան, Ատենախոսութիւն, էջ 111-114:

սխալվել են. «Բայց ԽԶ (46) վասն այնորիկ ասեմք, զի լուսին է ար է լիով կիսամբն իւրով: Բայց զի մարտ ամիս հոռմայեցոց ԼԱ (31) է, թէ սակաւ է վերադիրն զոր երթամք՝ զԼԱ (31) թիւն հանեմք մարտի ամսոյ, եւ մնացելովն գտանեմք յապրելի ամսեան զարն որքան եւ իցէ հանգստեան լրմանն լուսնոյ: Իսկ որոց ոչ իցէ ամիսն ԼԱ (31), նոյն ԽԶ-ին, թէ անլի ինչ իցէ քան զլրումն լուսնոյ, ի վերադիրսն պակասէ, բայց գտանի շափով ուղիղ միայն քանիւնութիւն լուսնին: Բայց որք ԽԴ (44) կանոնեցին զհարակայսն, չորեքտասան միայն ճշդիւ ասեն ի լրմունս իննետասներեկի ամաց զաւուրս լուսնին, եւ զի անլի քան զչորեքտասան պատահէ, քաջայայտ է ճիշտ գիտողացն, եւ ոչ ըստ պակասութեան, ապա այդ վերադիրք եւ յարակայք են, որ անթերի ցուցանեն զաւուրս լուսնոյ...»³⁹: Այս հատվածին հաջորդում է կատարված հաշվարկը, որտեղ Սարկավազը բոլոր ամիսների կտրվածով ցույց է տալիս վերադիր և հարակայի ԽԴ (46) արժեքը⁴⁰: *Կանոնը մատնանշում է, որ Հովհաննես Սարկավազը, կատարելով այդ փոփոխությունը, ապրիլի 4-ի լրման տարվա վերադիրը վերածել է 11-ի ու դարձրել հնգյակի ու վեցյակի 1-ին տարի՝ ի հակադրություն Անանիա Շիրակացու Շ-եակի ապրիլի 2-ի լրման տարուն*⁴¹: *Այս տեսանկյունից՝ Շ-եակի 19-ամյակի զատկական լրման առաջին տարին ապրիլի երկուսի՞ն, թե՞ ապրիլի չորսին կանոնակարգելու հարցը պարզաբանելու համար պետք է համեմատել Անանիա Շիրակացու, Հովհաննես Կոզեռնի և Հովհաննես Սարկավազի մեկնությունների՝ Լուսնին վերաբերող հատվածները: Տոմարագետներն առաջնակարգ տեղ են հատկացրել Լուսնի ստեղծման՝ ծնունդի և լրման թեմաներին և դրանք ճշգրիտ որոշելու կանոններին: «Մեկնութիւն տումարի Անդրեասայ» բնագիրը, որի հեղինակը Անանիա Շիրակացին է⁴² և որին հատուկ է հարցուպատասխանիքի ձևը, 2 հարց է առաջադրում՝ «Զի՞նչ է, որ ասէ «կա՛լ հանապազ Լ. (30) »» և «Զի՞նչ է, որ «ԽԵ. (45) հանապազ ասէ կա՛լ»»⁴³, ապա մեկնում է այս խնդիրները: Առաջին հարցին պատասխանում է այսպես. պետք է վերցնել Լուսնի մի շրջապտույտի օրերը և, պակասեցնելով (հանելով) վերադիրն ու կիսակը, կգտնենք Լուսնի ծնունդը: Իսկ մշտապես 45 հաստատունը վերցնելու հարցը մեկնում է այսպես. 30-ը Լուսնի օրերն են, իսկ 15-ը պետք է գումարել Լուսնի լրումը ցույց տալու համար: Անանիա Շիրակացին այս*

³⁹ Ա. Աբրահամյան, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, էջ 256:

⁴⁰ Նույն տեղում, էջ 256-257:

⁴¹ Գ. Միսնյան, *Ատենախոսություն*, էջ 86:

⁴² Ռ. Վարդանյան, *Անանիայի Շիրակացույ (Շիրակունույ) համարողի ՇԼԲ. կարգը*, Երևան, 2015, էջ 98, հմմտ. Գ. Գալստյան, «Անանիա Շիրակացին և նրա «Մեկնութիւն տումարի Անդրեասայ» բնագիրը», էջ 63-64:

⁴³ «Մեկնութիւն տումարի Անդրիասայ»՝ Զ. Էյնաթյան, *Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ*, Երևան, 2015, էջ 59:

մեկնություն մեջ եղել է շատ լակոնիկ՝ կարճ պատասխաններ տալով հարցումներին:

Հ. Բաղալյանի տեսակետն առ այն, որ Լուսնի ծնունդի ժամանակը այս կանոնով որոշելը ունի որոշակի թերություն, այն է՝ հաճախ տարվա վերադրի և կիսակի գումարը մեծ է լինում 30-ից, համոզիչ է թվում: Այդ դեպքում կարելի է 30-ի փոխարեն գումարել 60: Ապա վերադրի ու կիսակի գումարը հանել 60-ից, ստացվածը բաժանել 30-ի (վերջինս բացակայում է Հովհաննես Սարկավազի կանոնում), և ստացված մնացորդը ցույց կտա՝ նորալուսինը երբ է եղել: Իսկ լիալուսնի ժամանակը որոշելու համար պետք է տարվա վերադրին ավելացնել տվյալ ամսվա կիսակը և ստացվածը հանել 45 հաստատուն թվից⁴⁴: Իսկ «Տիեզերագիտությունն եւ տոմար» աշխատության մեջ ականատես ենք լինում շատ մանրամասն քննության, որտեղ Անանիա Շիրակացին անդրադառնում է Լուսնի կառուցվածքի հարցին, այն խնդրին, թե Լուսնի լույսը իրենից է, թե՞ Արեգակից, թե ինչու՞ նրա լույսը Արեգակի լույսի պես հզոր չէ: Շիրակացին արծարծում է նաև այն հարցը, թե ինչու է Լուսնի լույսը ավելանում ու պակասում, և անդրադառնում այլ խնդիրների ևս: Լուսնի կազմության մասին խոսելիս տոմարագետն այդ հարցը մեկնում է այսպես. «...Լուսինն տար է սեղմ, խիստ մաքուր և գնդաձև»⁴⁵: Պատասխանելով այն հարցադրմանը, թե Լուսնի լույսը Արեգակից, թե՞ հենց իրենից՝ Լուսնից է, Անանիա Շիրակացին բերում է առկա բոլոր վարկածները և եզրակացնում, որ այն իր լույսը ստանում է Արեգակից: Այսպես՝ «...Բայց ես հաւանիմ բազմաց իմաստասիրութեան յԱրեգականէ ասել»⁴⁶: Խոսելով Լուսնի լույսի հզորության մասին՝ Շիրակացին նախ բերում է «արտաքնոց»⁴⁷ տեսակետը առ այն, որ Լուսնի վրա կան սև գծեր, որոնք նմանվում են խոռոչի բծերի, և այդ է պատճառը, որ այն չի կարող լուսավորել Արեգակի

44 Հ. Բաղալյան, Օրացույցի պատմություն, էջ 132:

45 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտությունն եւ տոմար, էջ 39:

46 Նույն տեղում, էջ 40:

47 Սկսած Բրիտանոստոսիան տարածման շրջանից՝ Բրիտանոստոսիան համայնքներից դուրս եղած մարդիկ, ոչ հավատացյալները՝ հեթանոսները, կոչվում էին «արտափնիք»: «Արտափնիք», «արտափն գրեանիք» տերմիններն առկա են ինչպես հայկական, այնպես էլ բյուզանդական շատ գրվածքներում՝ ոչ Բրիտանոստոսիան աշխատանքները սահմանելու համար: Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն (Ե.-ժԸ. Դր.), հ. Ա., Երևան, 1959, էջ XII-XIII, նաև Մ. Է. Ծիրինյան, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը, Երևան, 2005, էջ 189-191:

Վերաբերյալ հաստատվում Անանիա Շիրակացին, մատնանշելով «արտափնոց», փաստորեն նկատի է առնում արտափնի՝ աշխարհիկ գիտություններով (իմա՝ աշխարհագրություն, երկրաչափություն, աստղագիտություն, ֆերականություն, փիլիսոփայություն) զբաղվող գիտնականներին: Հետաքրքրական է մի փաստ, որ ժԷ դարում Մելիսեդեկ Վժանեցին, աշխատելով էջմիածնի ուսումնարանում, դասավանդում էր արտափն գիտություններ, որոնց թվում էր նաև տոմարագիտությունը: Այս մասին տե՛ս Հ. Անասյան, նույն տեղում:

պես⁴⁸: Այնուհետև նա անդրադառնում է եկեղեցականների տեսակետին. «...Իսկ եկեղեցականնքն ասացին, թէ այն որ երևին ի Լուսնի, երկիր է այն եւ ծով, զի որպէս հայելի զամենայն ընդդէմ կացելոց իւր ցուցանէ յինքեան զնմանութիւն, նոյնպէս է Լուսինն ցուցանէ յինքեան զերկիր եւ զծով...»⁴⁹: Մեկնելով այս հատվածը՝ Շիրակացին ներկայացնում է Աստվածաշնչյան տեղին, որտեղ խոսվում է լուսատուների արարման մասին (Ծննդ. Ա. 14-19) և հստակեցնում, որ հարկ չէ լույսի ավել և պակաս լինելու մասին խոսել, որովհետև Արեգակը ստեղծվեց Աստծու կողմից ցերեկին իշխելու, իսկ Լուսինը՝ գիշերն իշխելու համար⁵⁰: Անանիա Շիրակացու այս երկու երկերի համապատասխան հատվածները համեմատելով կարելի է հանգել այն եզրակացության, որ «Մեկնութիւն տումարիս Անդրեասայ» երկում հեղինակը փորձել է լուծել կիրառական խնդիրներ, որոնք վերաբերում էին Լուսնի ծննդյան և լրման սահմանումներին, իսկ արդեն իր մեծածավալ մեկնության մեջ զբաղվում է Լուսնի վերաբերյալ տեսական հարցերի պարզաբանմամբ:

Անցնելով Հովհաննես Կոզեռնի մեկնությանը՝ արձանագրենք, որ այն հրատարակել են Հ. Քյուրտյանը⁵¹, Ջ. էյնաթյանը⁵², Հ. Քյոսեյանը⁵³: Կարևորելով վերջին երկու հրատարակությունները՝ նշենք, որ դրանք ունեն առանձնահատկություններ: Ջ. էյնաթյանը այն հրատարակել է «Մեկնութիւն տումարի զոր աւարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականունն Կոզեռն կոչեցեալ» վերնագրով համեմատելով հետևյալ ձեռագրերը՝ ՄՄ 2292, 1999, 2001, 3587, 10200, 7040 և Հ. Քյուրտյանի հրատարակած բնագիրը: Մեկնողական բնագրից հետո հեղինակը գրել է «Յոհաննիսի վարդապետի, որ մականունն Կոզեռն ի խնդրոյ Անանիայի աշակերտաց եպիսկոպոսի վասն զի գիտելոյ զպատեհաւ վերայ բերելեաց» երկրորդ բնագիրը, որի համար համեմատել է ՄՄ 1973, 6017, 7098 ձեռագրերը և Յ. Քիրտեանի բնագիրը: Իսկ Հ. Քյոսեյանը համեմատել է երկու ձեռագիր՝ ՄՄ 1999 և ՄՄ 2292 և մեկնության առաջին բնագրից հետո գրել «Վասն հոռոմին» ենթավերնագրով հատվածը: Նշված ձեռագրերին կարելի է հավելել ևս երկուսը, որոնք պարունակում են այս մեկնությունը և որոնք չեն օգտագործվել վերոհիշյալ հրատարակություններում՝ ՄՄ 5809 և ՄՄ 8716: ՄՄ 5809 ձեռագրում ևս առկա է «Վասն հոռոմին» հատվածը, սակայն այն կրում է «Վասն Լուսնին» ենթավերնագիրը (թ. 79բ): Ուշագրավ է, որ բնագրի հենց այս

⁴⁸ Անանիա Շիրակացի, *Տրեգերագիտութիւն եւ տումար*, էջ 40:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում, էջ 44:

⁵¹ Յ. Քիրտեան, «Յովհաննէս վարդապետ Կոզեռն», ՀԱ, 1967/Ա., էջ 1-15:

⁵² Ջ. էյնաթյան, *Տրեգերագիտութիւն և տումարի մեկնություններ*, էջ 81-95:

⁵³ Յովհաննէս Տարաւնեցի Կոզեռն, *Մեկնութիւն տումարի զոր արարեալ Յոհաննիսի վարդապետի որ մականունն Կոզեռն. Վասն հոռոմին*, էջ 64-69:

հատվածում առկա են Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի կամ, այլ կերպ ասած՝ Մեթոնի ցիկլի վերաբերյալ հաղորդումներ: Այն հարցին, թե «Ընդհր երթաս ժժ (19), յորժամ [վերադիր⁵⁴] առնես», Հովհաննես Կոզեռնը պատասխանում է, որ «Վասն զի Լուսինն ի ժժ. (19) ամին դառնայ»: Եվ իրոք, ոչ երկար տևող պարբերաշրջանների⁵⁵ մեջ ամենահաջողվածներից մեկը Մեթոն Աթենացու ստեղծածն է: Նա մոտավորապես Ք. Ա. 430 թ. ապացուցել էր, որ Արեգակի ու Լուսնի միևնույն պահին նույն կետից դուրս գալու դեպքում դրանք նույն դիրքում կլինեն յուրաքանչյուր 19 արևադարձային տարին մեկ: Եվ սրանից հետևում է, որ Լուսնի փուլերը տարվա նույն օրերում նույն կարգով կրկնվում են 19 տարին մեկ անգամ⁵⁶, չնայած այն փաստին, որ այս նույն պարբերաշրջանը կիրառվել էր Չինաստանում, Միջագետքում և այլուր Մեթոնից շատ առաջ⁵⁷: Հետաքրքրական մի փաստ ևս. թեև Լուսնի 19-ամյա պարբերաշրջանում Լուսնի լրումները կրկնվում էին 19 տարին մեկ անգամ, սակայն վերադրի արժեքները հայոց մեջ չունեին 19-ամյա պարբերականություն՝ ի տարբերություն Հուլյան տոմարի վերադիրների համակարգի⁵⁸: Հաջորդ ուշագրավ հաղորդումը հետևյալն է. «Նւ ո՞վ է, որ դարձուցանէ զԼուսինն»: Պատասխանելով տոմարագետը նշում է, որ 7 ամսանահանջներն են, քանի որ Արեգակից մնացած են լինում Լուսնի վերադրի 11 օրերը, և ապրիլի 13-ից մինչև մարտի 25-ն ընկած հատվածում Լուսնի լրման պարբերաշրջանի 19-րդ տարվա ընթացքում ժողովվելով ստացվում է 7 ամիս և 1 օր պակաս: 7 ամսվա 1 պակաս օրը լրացնելու համար 19-երեակի վերջին տարում վերադրի արժեքը 11-ի փոխարեն լինում է 12⁵⁹: Բերվածը հասկանալի դարձնելու համար ասենք, որ այդ 19 տարին պարունակում է մոտավորապես ամբողջ թվով 235 լուսնային ամիսներ: Եվ, որ ամենակարևորն է, պարբերաշրջանի 19 տարիներից 12-ը հաշվվում են 12-ամսյա, իսկ 7-ը՝ 13 ամսյա: Ընդունված է ամսանահանջ, այսինքն՝ 13-ամսյա, համարել Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի տարիներից 7-ը՝ 3-րդը, 6-րդը, 8-րդը, 11-րդը, 17-րդը և 19-րդը⁶⁰: Այսպիսով ապրիլի 13-ի լրման տարուց, որը բոլորակի սկիզբն է՝ հաշվման իմաստով, մինչև մարտի 25՝ բոլորակի վերջը, ամեն տարի մնացած են լինում

⁵⁴ Հավելումը մերն է՝ ըստ ՄՄ 5809 ձեռագրի (79բ):

⁵⁵ Տարբեր ժամանակներում տարբեր երկրներում կիրառվել են Լուսնի տարբեր պարբերաշրջաններ՝ եռամյա, ութամյա, 84-ամյա, 1021-ամյա և այլն: Այս մասին տես **Գ. Բրուտեան**, Հայկական տոմարագիտություն, էջ 84-87:

⁵⁶ **Հ. Բաղալյան**, Օրացույցի պատմություն, էջ 250-251:

⁵⁷ **Գ. Բրուտեան**, Հայկական տոմարագիտություն, էջ 86:

⁵⁸ **Ռ. Վարդանյան**, Անանիա Շիրակացու (Շիրակունույ) համարողի ՇԼԲ կարգը, էջ 238, հմմտ. **Գ. Գալստյան**, «Հովհաննես Կոզեռնը և նրա «Մեկնություն տոմարի» աշխատությունը», էջ 10:

⁵⁹ **Յովհաննէս Տարաւնէցի Կոզեռն**, Մեկնութիւն տոմարի զոր արարեալ Յոհաննիսի վարդապետի որ մականունն Կոզեռն. Վասն հոռոմին, էջ 67:

⁶⁰ **Գ. Բրուտեան**, Հայկական տոմարագիտություն, էջ 87:

մասեր: Եվ այդ մասերը կուտակվելով կազմում են 361 մաս, որ լինում են 30-մասնյա 12 ժամ, և մնում է մեկ մասնիկ: Այս է պատճառը, որ 19-ամյակի վերջին տարում պետք է ավելացնել 12⁶¹: Հիշենք նաև, որ այդ 1 օրը գումարվում է 7 ամսանահաջ տարիների 1 օրվան, որպեսզի լրումը լինի և Զատիկի լրման օրերը նույնը լինեն: Լուսնի լրման պարբերաշրջանների կատարելությունը կայանում է նրանում, որ դրանք միշտ կրկնվեն՝ ապահովելով Զատիկի լրումների անխախտ ընթացքը: Գ. Բրուտյանն այն կարծիքն է հայտնում, որ սկզբունքորեն անհնար է ունենալ բացարձակ ճշգրիտ պարբերաշրջան, ուստի՛և՝ իրական հավերժական լուսնային օրացույց⁶²: Բայցևայնպես, երբ հաշվարկային տատանումները փոքր են, տոմարագիտության մեջ կարելի է դրանք անտեսել:

Այսպիսով, Անանիա Շիրակացու «Մեկնութիւն տումարիս Անդրեասայ» բնագիրը և Հովհաննես Կոզեռն-ը մեկնությունն ունեն առնչություններ թե՛ ոճի և թե՛ մեկնությունների բովանդակության առումով, քանի որ դրանցում քննարկվում են առավել գործնական-կիրառական խնդիրներ, իսկ «Տրեզերագիտութիւն եւ տոմար» աշխատությունն անդրադառնում է հատկապես տեսական հարցերի, որոնց իմացությունը պարտադիր է՝ գործնականում կիրառելու համար:

Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուն առանձնահատուկ է, քանի որ նրանում առկա «Յաղագս Լուսնի» սահմանումներն ու կանոնները վերաբերում են տոմարի թե՛ տեսական, թե՛ գործնական-կիրառական խնդիրների: Այսպես, Հովհաննես Սարկավազը «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի նույնանուն բնագրում ներկայացնում է, որ Լուսնի ստեղծման վերաբերյալ ոմանք ասում էին, թե այն ստեղծվել է 15-օրյա, ոմանք՝ 11-օրյա, ոմանք՝ 2-օրյա: Մեջբերելով Եփրեմ Ասորու մեկնությունը⁶³, ըստ որի՝ Լուսինը 11-օրյա ստեղծվեց, այդ օրերն ավելացան Լուսնի օրերին առաջին տարում, և այդ 11-ը դարձավ առաջին տարվա վերադիրը⁶⁴: Ուստի և ամեն տարի գումարում ենք 11 Լուսնի վերադիրը գտնելու համար: Սարկավազը նաև նշում է, որ 11 ժամն ամեն տարի կուտակվելով՝ լինում է Արեգակի յոթներյակը: Այնուհետև անցնում է կիրառական հարցերի և մեկնում այն խնդիրը, թե երբ է եղել Լուսնի լրման առաջին տարին՝ ապրիլի 2-ի՞ն, 4-ի՞ն, թե՞ 13-ին⁶⁵: Հետևաբար կատարյալ, որ որ առաջին տարում վերադիրը եղել է Բ.

61 Զ. Էյնաթյան, Տրեզերագիտության և տոմարի մեկնություններ, էջ 84:

62 Գ. Բրուտեան, Հայկական տոմարագիտութիւն, էջ 84:

63 «Մեկնութիւն արարածոց»-ում հեղինակը շեշտում է, որ Լուսինը ստեղծվեց կատարյալ, այսինքն՝ 11 օրական, ինչպես կատարյալ էր ստեղծվել մարդը՝ Ադամը: Տե՛ս Եփրեմ Ասորի, Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք. Մեկնութիւն Արարածոց, Ելից, Ղետացոց, Թուոց, Օրինաց, Յեսուայ, Դատաւորաց, Թագաւորութեանց եւ Մնացորդաց, հ. Ա., Վենետիկ, 1836, էջ 6:

64 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրութիւնը, էջ 225:

65 Նույն տեղում:

(2), Գ. (4) կամ ԻԳ. (23), սակայն Լուսնի շրջանի առաջին տարվա սկզբում տարվա վերադիրը պետք է ընդունել 0, որովհետև այդ ժամանակ դեռևս տարբերություն չի առաջանում արեգակնային և Լուսնային տարիների օրերի թվի մեջ, իսկ մեկ տարվա ընթացքում, այն է՝ Լուսնի շրջանի երկրորդ տարվա սկզբին, տարբերությունը լինում է 10 օր 20 ժամ 59 րոպե 46 վայրկյան, որը, հաշվումները պարզեցնելու համար, ընդունված է համարել 11 օր⁶⁶: Խնդիրն այն էր, որ Անահիա Շիրակացին թեև հնգյակի ու վեցյակի արժեքները սահմանել է ապրիլի 2-ի լրման տարուց (ներկա 554 թվական), բայց վերադիրների համակարգն սկսել է 19-երեակի առաջին տարուց, այն է՝ ապրիլի 4-ի լրման տարուց (ներկա 562 թվական). այն Շ-եակի հաշվման իմաստով 10-րդ տարին էր: Այստեղ վերադրի արժեքը Թ (9) է: Շիրակացին ամեն հաջորդ տարուն ավելացրել է 11, իսկ 19-երեակի 10-րդ տարում (ներկա 571 թվական)՝ 12: Դա Շ-եակի հաշվման վերջին տարին էր⁶⁷: Շ-եակի՝ հաշվման իմաստով վերջին տարում վերադրի արժեքը մեկով ավելացնելն ուներ կարևոր պատճառ և նպատակ, այն է՝ արևային և Լուսնային տարիների հավասարվելը: Իսկ Հովհաննես Սարկավազը, կատարելով հարակալի և վերադրի արժեքների փոփոխությունը, ապրիլի 4-ի լրման տարվա վերադիրը վերածել է 11-ի ու դարձրել հնգյակի ու վեցյակի 1-ին տարի՝ ի հակադրություն Անահիա Շիրակացու Շ-եակի ապրիլի 2-ի լրման տարուն: Այդ հարցի պարզաբանումը կա «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» աշխատության «Յոհաննու քահանայի յաղագս եղանակաց եւ տաւնից եւ քահանայութեան ամաց դիպաբանութեամբ ի նոյն տեսութիւն» բնագրում. «Եւ գիտես զսխալումն առաջնոյն այսպէս: Յորժամ յերկուցն ապրիլի առնես հնգեակ եւ վեցեակ եւ ապա լուսին ռոպէիւք ածէ պակաս 2 թուով եւ յերեսնեկի անդ, որ կոչի քահագիւն, թէ առաջնովք արացես զմուսն վերադրաւք, ածէ սխալ զաւուսն լուսնոյ երկու թուով եւ յերեսնեկի անդ, վասն որոյ յաւելեալ զերկու թիւդ ամենայն երկուսն ապրիլի»⁶⁸: Նշենք, որ Հովհաննես Սարկավազի Լուսնացոյցը, որտեղ նշված է Լուսնի ծննդյան և լրման ժամանակը, վերականգնել է անվանի տոմարագետ Ռ. Վարդանյանը⁶⁹:

Դառնանք հարակաների խնդրին. դրանց սահմանմանն ու դրանց տեսակներին անդրադարձ կա Սամուել Անեցու «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուելի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի» բնագրի «Վասն պատճենի Հոռոմայեցվոյն եւ [վասն] կրկնակաց եւ կիսակաց» խորագրված

66 Զ. Բաղայան, Օրացույցի պատմություն, էջ 296:

67 Ռ. Վարդանյան, Անահիա Շիրակացու (Շիրակունույ) համարողի ՇԼԲ կարգը, էջ 235:

68 Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 253:

69 Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Երևան, 1999, էջ 233-257:

հատվածում⁷⁰: Հովհաննես Կոզեռնը ևս ստեղծել էր այդպիսի կանոնական համակարգ, որը բացակայում է նրա մեկնությունից: Իսկ Հովհաննես Սարկավազը կանոնի բացատրությունն այլ դիտանկյունից է ներկայացնում և փոփոխություն կատարում արդեն գործող կարգում:

5. Հաջորդ աղբյուրը Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» ժողովածուի գործնական-կիրառական հատվածի սկզբում առկա՝ իր խմբագրած և ստեղծած «Պատճէն»-նեւն են: Հայոց մեջ «Պատճէն տոմարի հայոց»-ի սկզբնավորողը եղել է Աթանաս Տարոնացին, որ կազմել է այն 581 թ.՝ Մովսես Բ. Եղիվարդեցու (574-604 թթ.) հանձնարարականով⁷¹: Իսկ «Պատճէն»-ի առաջին խմբագիրը եղել է Անանիա Շիրակացին. նա ավելացրեց 8 անշարժ տոմարների «Պատճէն»-ները և գետեղեց Քննիկոն տոմարական ժողովածուի մեջ: Շիրակացուց հետո «Պատճէն»-ը խմբագրել են Հովհաննես Կոզեռնը⁷², Հովհաննես Սարկավազը, Ստեփանոս Մեծրկա որդին 1126 թ.⁷³ և Սամուել Անեցին 1165 թ.⁷⁴, որոնց խմբագրությունները պահպանվել են ՄՄ 1999 գրչագրում: Ըստ Գ. Սիմոնյանի՝ Սարկավազի խմբագրած պատճենների մասին պահպանվել է հեղինակային հիշատակություն առ այն, որ ինքը կազմել է թվով 15 ազգերի տոմարների պատճենները եթե ոչ առանձին, ապա համապատասխան խմբերով⁷⁵: Նրա բովանդակ պատճենները հայտնի են ՄՄ1973, 1999 և բազմաթիվ այլ գրչագրերում:

Այսպիսով՝ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի՝ մեզ հասած «Պատճէն տոմարի Հայոց» մասի տարբեր բնագրերում առկա կանոնական սահմանումները վերաբերում եմ Հայոց և՛ Մեծ, և՛ Փոքր կամ միայն Փոքր թվականներին: Հասկանալի է, որ մինչև Սարկավազի կազմած տոմարական համակարգի գործածությունը հարկ էր առաջնորդվել Հայոց Մեծ թվականով⁷⁶:

Գործնական-կիրառական այնպիսի երևույթների մեկնություններ, ինչպիսիք են, օրինակ, կիսակը, կրկնակը, յոթներյակը, նահանջը և դրա սահմանումները, վերագրիրը և այլն, առկա են Սարկավազի պատճեններում: Այս առումով

70 Ա. Աբրահամյան, «Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը», *Էջմիածին*, 1952/Ա., էջ 36: Այս մասին առավել մանրամասն տե՛ս նաև Գ. Գալստյան, «Սամուել Անեցին և նրա «Մեկնութիւն տոմարի» աշխատության մի ֆանի հարցեր», էջ 43-50:

71 Ռ. Վարդանյան, «Պատճէն տոմարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.), Երևան, 2007, էջ 8:

72 Նույն տեղում, էջ 88:

73 Նույն տեղում, էջ 195:

74 Նույն տեղում, էջ 195-196:

75 Գ. Սիմոնյան, *Ատենախոսություն*, էջ 92:

76 Նույն տեղում, էջ 99:

բնագիրը շատ հետաքրքրական է, ինչը թույլ է տալիս տեսնել այս կանոնական սահմանումներում արված փոփոխությունները:

Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Պատճէն տոմարի» աշխատության մեջ հայոց տոմարի ամիսների կրկնակները⁷⁷ որոշելու համար սահմանված է հետևյալ կանոնը. «Կրկնակի ամսոց այսպէս արա. կալ զնաւասարդի ամիսն եւ երթ է (7) է (7), մնա Բ (2). այն կրկնակ է հոռի ամսոյ: (Կ)ալ զհոռի ամիսն եւ զիւր կրկնակն եւ երթ է, է, մնա Դ (4), (ա)յն կրկնակ է սահմի ամսոյ: Նոյնպէս եւ զայլսն»⁷⁸: Այս կանոնը չի տարբերվում նախորդ շրջանի տոմարագետների՝ Անանիա Շիրակացու, Հովհաննես Կոզեռնի ներկայացրած հաշվման եղանակից: Հովհաննես Կոզեռնը «Մեկնութիւն տոմարի» երկում տոմարական կնճիռների վերաբերյալ կանոնները և դրանց հաշվման կարգերը ներկայացրել է ըստ հայոց շարժական տոմարի:

Սարկավագը սահմանում է նաև Հռոմեական օրացույցի ամիսների կրկնակը որոշելու կարգը, որը «Պատճէն տոմարի» աշխատությունում ձևակերպված է այսպէս. «Կրկնակի ամսոց այսպէս արա. կալ զնաւասարդի ամիսն եւ երթ է (7) է (7), մնայ Բ, այն կրկնակ է հոռի ամսոյ: Կալ զհոռի ամիսն եւ զիւր կրկնակն եւ երթ է (7) է (7), մնայ Դ (4), այն կրկնակ է սահմի ամսոյ: Նոյնպէս եւ զայլսն»⁷⁹:

Շահեկան են տոմարագետի սահմանած կանոնները վերադիրների համակարգի վերաբերյալ: Սարկավագադիր տոմարում վերադիրների համակարգը ցույց է տալիս Լուսնի հասակը քաղոց 28-ին (հուլյան տոմարով՝ հունվարի 5-ին), իսկ Սարկավագադիր տոմարի հայոց շարքի տարեմուտը քաղոց 29-ն է՝ հունվարի 6-ը՝ Քրիստոսի Մննդյան ու Հայտնության տոնի օրը, որը հայոց եկեղեցական տարեակիզբն է: Փաստորեն, Հովհաննես Սարկավագը խմբագրել է Շեակի 2-րդ շրջապատույտի 10-րդ, այն է՝ ապրիլի 4-ի լրման տարվա վերադիրը՝ այն սահմանելով 11 հուլյան տոմարի համար, իսկ հայոց տոմարի համար՝ 16: Այսինքն այն կանոնը հուշում է, թե այն որ օրվա պատկերն է և հատկապես որն է Հովհաննես Սարկավագի տոմարի օրացուցային տարեմուտը: Հուլյան տոմարի վերադիր տեղը տարվա վերջին օրն է (դեկտեմբերի 31): Դրան ավելացնելով 5 կատանանք և՛ հայոց վերադրի արժեքը, և՛ այն օրը, որտեղ դրվել է այն, այն է՝ հունվարի 5-ը⁸⁰:

Հովհաննես Սարկավագի «Պատճէն տոմարի» աշխատության մեջ յոթներ-

⁷⁷ Կրկնակը ցույց է տալիս, թե շաբաթը մեկ ամսվա մեջ ինչ կրկնություն ունի և ինչ մնացորդ է ստացվում: Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Բրուսյան, Հայկական տոմարագիտություն, էջ 106-109, տե՛ս նաև Հ. Բաղդասյան, Օրացույցի պատմություն, էջ 120-129:

⁷⁸ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 204:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Գ. Սիմոնյան, Ատենախոսություն, էջ 114:

յակի⁸¹ հարցի շուրջ կարդում ենք. «Եւթներեակ այսպէս (արա). կալ զթուականն, Գ (3) ի վերայ ած կամ Դ (4) ի բաց երթ եւ զայն երթ է (7) է (7), որ մնա՝ եւթներեակ է»⁸²: Նույն բնագրում կարդում ենք նաև. «Ելից տարւոյն պատկեր աւուրն եւթներեակ է ամենայն ազգաց...»⁸³: Վերոբերյալից ականերև է, որ յոթներյակը տարվա վերջին օրվա՝ ավելյաց 5-ի, Հուլյան տոմարով դեկտեմբերի 31-ի, իսկ Սարկավազադիր թվականության համակարգով (Հայոց Փոքր թվական) քաղոց 28-ի պատկերն է, այլ ոչ թե նավասարդի 1-ի կամ կամ հունվարի 1-ի⁸⁴: Եվ սրանից ածանցվում է այն հետևությունը, որ յոթներյակը գտնելու համար հաշվարկները պետք է սկսել կիրակիից:

Ուշագրավ է նաև Սարկավազի այն հաղորդումը, որ բոլոր ազգերի յոթներյակների հիմքում պետք է դնել եբրայեցիների յոթներյակների համակարգը: Նա այս հարցը մեկնում է այսպես. եբրայեցոց հասարակածը ավելյաց 4-ին է համընկնում, քանի որ գիտենք՝ ավելյաց առաջին օրը արաշագործության սկիզբն է համարվում, իսկ վերջին օրը, որը յոթներյակի պատկերն է, հինգշաբթի է, իսկ արդեն ուրբաթ օրը, որը մարդու ստեղծման օրն է, սկսվում է եբրայական նիսան ամիսը, և այդ օրը Արեգակը մտնում է Խոյ կենդանակերպ⁸⁵: Ակներև է, որ յոթներյակը ցույց է տալիս, թե տարվա վերջին օրը շաբաթվա ինչ օր է, և սրանից ելնելով արդեն պարզ է դառնում, որ Արարչագործության առաջին օրերը համընկել են հրեական ադար ամսի վերջին օրերին, իսկ վերջին օրը, որը հինգշաբթի էր, վճռել է տարվա յոթներյակը. ուստի և Սարկավազը ցույց է տալիս, որ բոլոր ազգերի յոթներյակների հիմքում պետք է դնել եբրայեցիների յոթներյակների համակարգը:

Հովհաննես Սարկավազը յոթներյակները հաշվելու համար մի քանի կանոն է սահմանում. առաջինն, ինչպես տեսանք, չէր տարբերվում նախորդ տոմարագետների սահմանած կանոնից:

Հովհաննես Սարկավազի յոթներյակների համակարգը ստանալու կանոն է առկա Հովհաննես գրչի ընդօրինակություն մեջ, որն ունի որոշակի առանձնահատկություններ. նրանում ներկայացվում է նահանջ տարիներին յոթներյակները մեկով ավելացնելու փաստը, որն էլ ճշգրտություն է մտցնում հաշվման համակարգում: Այս կանոնի կարևոր հատկանիշն այն է, որ հեղինակն առանջնորդվում է 28-ամյա պարբերաշրջանով, քանզի հայտնի է, որ յոթներյակների համա-

⁸¹ Յոթներյակ որոշել նշանակում է, թե տվյալ տարվա վերջին օրը շաբաթվա ինչ օր է: Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Բրուսյան, Հայկական տոմարագիտություն, էջ 95-106, տե՛ս նաև Հ. Բաղալյան, Օրացույցի պատմություն, էջ 120-129:

⁸² Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 205:

⁸³ Նույն տեղում, էջ 225:

⁸⁴ Գ. Միմոնյան, Ատենախոսություն, էջ 115:

⁸⁵ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 225:

կարգը նույնությամբ կրկնվում էր 28 տարին մեկ: «Եւթներեակ այսպէ՛ս արա. կա՛լ թուականդ, ե՛րթ ԻԸ (28), ԻԸ (28), որ ի խոնարհ մնա՛ չորիցն, չորիցն մի մի յաւել եւ ե՛րթ եւթն եւթն, որ մնայ՝ եւթներեակ է. թիւ մի այլ ե՛րթ հանապագ ի հոռովմի հայոց է: Իսկ ի հայտյն մի ի բա՛ց հան՝ երբայեցոց է: Եւ լինի այդ յամասամտէն յունուարոյ մինչեւ ի մեաասաներոդ աւգոստոս ամսոյ, որ է մուտ Նաւասարդոյ և անտի յառաջ ՓԱ. թիւ ի վերադիրն յաւել եւ թիւ մի եւթներեակ է»⁸⁶: Նկատելի է, որ այստեղ նշված են յոթներյակը ստանալու մի քանի միջոցներ: Սկզբնապես սահմանումը կանոնակարգում է հետևյալը. հարկավոր է վերցնել թվականը, բաժանել 28-ի, անտեսել ստացված քանորդը, մնացորդին գումարել 4 թվի այնքան բազմապատիկի քանակ, ինչքան առկա է բաժանման մնացորդի մեջ (կամ մնացորդում առկա նահանջ տարիների քանակի չափ): Հետո հարկ է ստացված արդյունքը բաժանել 7-ի, կրկին անտեսել քանորդը, հաշվել մնացորդը, որն էլ կլինի տվյալ տարվա յոթներյակի արժեքը: Իսկ այն տարիներին, երբ առկա կլինի նոր նահանջ, հարկ կլինի մինչև 7-ի բաժանելը ևս մեկ գումարել: Տվյալ տարին կունենա յոթներյակի 2 արժեք՝ մեկը մինչև հունվարի 1-ից փետրվարի 28-ը, իսկ մյուս արժեքը՝ տարվա հաջորդ հատվածի համար: Կանոնական սահմանման երկրորդ հատվածը սահմանում է Հայոց Սարկավագադիր թվականի հայոց շարքի համար յոթներյակի արժեքը որոշել հոռմեացվոց յոթներյակից մշտապես 1 հանելով և 5 գումարելով կամ 2 պակասեցնելով: Կամ կարելի է երբայեցիների յոթներյակների համակարգին 1 ավելացնել: Իսկ երրորդ միջոցը մատնանշում է հունվարի 1-ից մինչև օգոստոսի 1 եղած օրերի քանակներն իրար գումարել, ավելացնել 11, արդյունքը բաժանել 7-ի, քանորդն անտեսել, վերցնել մնացորդը, կստացվի խնդրելին⁸⁶:

Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ Հովհաննես Սարկավագը տվել է յոթներյակների մի քանի սահմանում, որոնք ինչպես նման են նախորդ շրջանի կանոնական սահմանումներին, այնպես էլ՝ որոշ առանձնահատկություններ ունեն, այն է՝ Սարկավագը ոչ միայն խմբագրել է յոթներյակի նախորդ կանոնը, այլև Հայոց Մեծ թվականի 2-րդ շրջապտույտի և իր կարգած անշարժ տոմարի համար սահմանել է նոր կանոններ:

Հովհաննես Իմաստասերը, մեկնելով նահանջի հարցը, նշում է, թե ինչու Հայոց շարժական տոմարով առաջնորդվելիս ամեն 4 տարին մեկ չենք ավելացրել հավելյալ 1 օրը. «Ուրպէս նահանջը՝ ար ւաւելի Արեգականն է, որ յաւելու յերներեակս ազգաց, բայց ի հայդ՝ ոչ, վասն որոյ ամիսք նոցա շարժին, այլ ոչ տաւն: Զոր եթէ ի մեռումս էր եղեալ, որպէս զերբայեցոցն ի նահանջի ամի գԱւելեացն վեց ունելով, և գաւրն ւաւելի յերներեակ տարոյն յաւելեալ՝ անաշխատ մեզ զգիտութիւն արուեստիցդ ցուցանէր: Զի կթներեկիդ յաւելուած

⁸⁶ Գ. Միմոնյան, Ատենախոսություն, էջ 115-120:

ըստ ընթացից Արեգականոյ է, իբրև զվերադիրոյ, որ յաւելուած Լուսնի, դո՛ւս ցուցանեն մեզ յայտնապէս զընթացս Լուսնի և Արեգական և զանցեալ ժամանակա...»⁸⁷:

Ընդհանրացնելով՝ վերստին ընդգծենք մեկնությունների դերն առհասարակ հայագիտության և մասնավորապես տոմարագիտության բնագավառներում՝ գտնելու համար շատ հարցերի պատասխաններ⁸⁸:

Ներկայացնենք մեր եզրակացությունները.

1. ԺԱ. դարավերջին - ԺԲ. դարում Հովհաննես Սարկավազի հեղինակած Հայոց տոմարի մեկնությունը միանշանակ արժեքավոր սկզբնաղբյուր է տոմարական դժվարընկալելի հարցերը դյուրին դարձնելու և վերստին պարզաբանելու համար:
2. Հովհաննես Սարկավազի տոմարական ժողովածուում առկա կանոնական սահմանումները վերաբերում են տոմարի թե՛ տեսական և թե՛ գործնական-կիրառական խնդիրներին:
3. Հովհաննես Սարկավազի՝ ապրիլի 4-ը Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի զատկական լրման առաջին տարի սահմանելու փաստը ներկայացրել ենք «Յաղագս լուսնի» վերաբերյալ կանոնների համեմատական քննությամբ:
4. Հոգվածում մեկնաբանված են հայոց տոմարի ամենահինը լինելու, բոլոր ազգերի տոմարների յոթներյակների հիմքում եբրայեցիների յոթներյակների համակարգը դնելու և հիմք ընդունելու հարցերը:
5. Աշխատանքում բացատրված են նաև Հովհաննես Սարկավազի կատարած փոփոխությունները և դրանց պատճառները վերադրի, հարակապի, յոթներյակների համակարգերի վերաբերյալ:
6. Մեկնություններն արժեքավոր են նաև նախորդ շրջանի մեկնությունների համեմատ առանձնահատկություններով. Հովհաննես Սարկավազը խմբագրել և մեկնել է հայոց տոմարն առհասարակ ու «Պատճէն տոմարի հայոց» բնագրերը:

⁸⁷ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 222:

⁸⁸ Սույն հոդվածում Հովհաննես Սարկավազի տոմարական ժողովածուում առկա և նախորդ շրջանի տոմարագետների մեկնությունների հետ համեմատությամբ եզր ունեցող բոլոր կանոններին չենք անդրադարձել: Դրանց նախատեսում ենք դրանց անդրադառնալ հետագայում:

GOR GALSTYAN

THE COMMENTARY OF THE ARMENIAN CALENDAR

BY YOVHANNĒS SARKAVAG

Key words: Armenian Calendar, commentary, Anania Shirakats'i, Yovhannēs Kozeṙn Taronets'i, Yovhannēs Sarkawag, theoretical character, practical aspect.

This article discusses the comments in the collection *Commentary on the Armenian Calendar* by Yovhannēs Sarkawag the Philosopher, in which certain issues, rules and definitions have parallels with the commentaries of Anania Shirakats'i and Yovhannēs Kozeṙn Taronets'i. The canonical definitions of Yovhannēs Sarkawag are compared with the same rules established by the earlier authors. The author has also tried to find out the reasons why the rules were changed. He has presented in more detail those definitions which were not examined in his previous articles (for example, "About the Moon"). In the end of the article, it is emphasized that commentaries, especially the one in question, are very valuable primary sources for understanding and clarifying complicated calendar issues.

ГОР ГАЛСТЯН

ТОЛКОВАНИЕ АРМЯНСКОГО

КАЛЕНДАРЯ ОВАННЕСА САРКАВАГА

Ключевые слова: Армянский календарь, интерпретация, Анания Ширакаци, Ованес Козерн Таронеци, Ованес Саркаваг, теоретический характер, практический аспект.

Цель данной статьи – представить те толкования из сборника Ованеса Саркавага Философа "Толкование армянского календаря", в которых некоторые вопросы, правила и определения имеют параллели в комментариях, написанных Ананией Ширакаци и Ованесом Козерном Таронеци. На основе сравнительного анализа представлены канонические определения, составленные Ованесом Саркавагом, в сопоставлении с подобными правилами, установленными предшествующими авторами, с указанием их особенностей и сходств, и выяснением причин изменения правил. В более подробном сличении представлены определения, которых мы не касались в наших предыдущих статьях. В статье подчеркнута важность комментариев как ценных первоисточников: особенно это верно в отношении данного "Толкования", оно помогает прояснить многие трудные календароведческие вопросы.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինֆնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիրիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելսարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարող մի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանուշ Բեգլարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS
HISTORY**Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the
Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants‘
in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians’ Attempts to Revive the Economy in Adana
Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY**Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as
Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat‘ets‘i as the First Samples
in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the
Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion
[of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants‘i133

Hasmik Badalyan

Dzorovank‘ Monastery of Cilician Armenia
and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses
of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication
by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта 215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана 225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зограб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви..... 259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) 299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
 в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
 календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
 Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/